

Թիւ 25061  
Յունուար 13, 1977

Ազնուափայէ  
Տիկ. Սրանիկ Իրմեան  
Էվընսթըն.

Ազնիւ Տիկ. Ինմեան,

Հոգշ. Տ. Վարուժան Ռ. Վրդ. Գապառնեանի միջոցաւ  
շնորհակալութեամբ ստացանց 1000 --հազար-- առլարի  
փոխագիրը՝ որպէս նուէր Մ. Վարդան Մայր Տաճարի:

Մեծապէս կը գնահատենք մեր նկեղեցւոյ հանդէպ ձեր  
ցոյց առւած հետաքրքրութիւնն ու ազնիւ ոգին, որ ար-  
դէն իսկ ընտանեկան ծանօթ աւանդութիւն մը դարձած է  
սկսելով ձեր քարեսիրա ողբացեալ ամուսինէն, որուն  
քարի յիշատակը անթառամ կը մնայ զինք ճանչցողներու  
սրտերուն մէջ :

Կ'աղօթենք որ Տէրը իր լոյսերուն մէջ հանգշեցնէ  
հայրիկ իրմեանի հոգին, եւ ձեզի ու ձեր ընտանիքի  
անդամներուն պարզեւէ քաջառողջ ու երկար կեանք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ